Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա, Հայաստանի կենսաբանական Հանդես
Национальная Академия Наук Армении. Биологический журнал Армении
National Academy of Sciences of Armenia. Biological Journal of Armenia

Գիտության պատմություն • История науки • History of science

Биолог. журн. Армении, 3-4 (52), 1999

УДК 581.09

ԲՈՒՅՍԵՐԻ ՏՈՏԵՄԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ.Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Խ.Աբովյանի անվան Հայկական մանկավարժական ինստիտուտ, 375001, Երևան

Հայոց հին պատմության մեջ բուսական աշխարհը եղել է պաշտամունքի առարկա բոլոր տոհմերի ու ցեղերի կյանքում: Այն ունեցել է տնտեսական խոշոր նշանակություն և գրավել է կարևոր տեղ դիցաբանական պատկերացումների մեջ: Հին հայկական առասպելը պատմում է, որ հայոց Արա Գեղեցիկ թագավորի մահից հետո քրմերի ավագանին նրա Անուշավան որդուն նվիրեց, մայրաքաղաք Արմավիրում գտնվող Անահիտ աստվածուհու մեհյանի շուրջը տարածված, Սոսյանց անտառը, որպեսզի թագաժառանգը դաստիարակվեր սրբազան անտառում: Վերջինս արհեստական ծագում ուներ, ստեղծվել էր Երվանդունի թագավորների կողմից մ.թ.ա. IV կամ III հազարամյակում: Սոսյանց անտառը կազմված էր արևելյան սոսու և արծաթափայլ բարդու տնկարկներից: Պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, քրմերը սովորություն ունեին ունկնդրելու ծառերի սոսափյունն ու գուշակություններ անելու պատերազմների, սպասվող բերքի, համաճարակների, բնական տարերքի և, ընդհանրապես, ապագայի մասին: Նման հիշատակություններ կան նաև օտար աղբյուրներում: Ըստ Ա.Ռեգելի, հնում արժեքավորում էր տրվում ծառերին, աստվածացնում էին դրանց: Այդ տեսակետից ուշագրավ են բարդին, սոսին, ընկուզենին, գնդաձև թեղին (չինար), հաճարենին և այլն:

Հեթանոս հայերի համար սրբազան էին ոչ միայն նշված ծառերը, այլև անտառն ընդհանրապես «սրբազան անտառ» [1]:

Ուրարտական սեպագիր արձանագրություններից տեղեկանում ենք սրբազան «Գիլուրիի անտառի» մասին: Մեզ են հասել «սրբազան ծառի» պաշտամունքի բազմաթիվ պատկերներ: Ծառերը այստեղ պատկերված են սիմետրիկ ճյուղավորությամբ, դեպի վեր թեքված պտուղներով [9]: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները դա հանրահայտ փյունիկյան արմավենին է, որը սրբազան ծառ է համարվել նաև հին Հայաստանում [7]: Որոշ պատմաբաններ գտնում են, որ այդ ծառի պաշտամունքը հնադարյան հայերը ուղղակի փոխ են առել հին ասորացիներից, քանի որ այդ ծառը Հայաստանում երբեք չի աճել [2]: Մեր կարծիքով այդ տեսակետները սխալ են, քանի որ պատմական Հայաստանի հարավային շրջաններում, հատկապես Հայկական Միջագետքում, փյունիկյան արմավենի աճեցվել է և այդ մերձարևադարձային ծառատեսակը լավ հայտնի է եղել մեր նախնիներին: Փյունիկյան արմավենի է մշակվել նաև Կիլիկիայում (Ղ.Ալիշան, 1896):

Մի շարք ծառատեսակների, այդ թվում նաև բարդու, պաշտամունքը շարունակվել է նաև քրիստոնեության ժամանակաշրջանում: Ներսես Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» նշում է, որ արևորդիները Սամոսատում երկրպագում էին ոչ միայն արևին, այլև բարդուն և համոզված

էին, որ դևերը մտնում են այդ ծառերի մեջ ու ստիպում մարդկանց, որ երկրպագեն իրենց: Սրբազան ծառ է համարվել նաև կաղնին, որը միաժամանակ երկարակեցության, ուժի, հզորության, հաջողության, երջանկության խորհրդանիշ է հանդիսացել [6]: Մինչև վերջերս Իջևանի շրջանի Լուսաղբյուր գյուղի ծայրամասում, Դյար-Սար լեռան ստորոտում աճում էր մի հսկայական կաղնի, որն, ավանդույթի համաձայն, տնկել էր հայոց զորավար Վարդան Մամիկոնյանը ավելի քան 1500 տարի առաջ: Այդ ծառը սրբազան էր համարվում և պաշտամունքի առարկա էր բնակչության համար: Մեծահասակների վկայակոչմամբ նման սրբազան ծառեր էին հաղարջենին (դարաղաջը), կաղնին, սոսին, տանձենին:

Անտառի պաշտամունքը նպաստում էր Հայաստանի լայնածավալ ու բազմազան տեսակային կազմ ունեցող անտառների պահպանման գործին: Հին դարերում սրբապղծություն էր համարվում անտառ ոչնչացնելը [4]: Բույսերի պաշտամունքի նման վկայությունների ենք հանդիպում և հայկական հին քանդակագործական հուշարձաններում: Այսպես օրինակ, Կողբի քարակոթողներից մեկի վրա ծաղկի վարսանդը փոխարինված է Մարիամ Աստվածածնի պատկերով մանուկ Հիսուսը գրկին:

Աստվածուհիների ծաղկային ծագումն է ակնարկում նաև Ադիամանի հայտնի քարակոթողը: Կինը գարնան և պտղաբերության աստվածուհին, ծնված ծաղկից, գլխից վեր է բռնել երկու ծաղկի ընդհանրացնող պատկերը, որը և կազմում է աճման ու պտղաբերության օրինական հիմքը: Ուրարտական ծագման մի գլանակնիքի վրա փորագրված է սայլ կենաց ծառով, որը ողջ բուսական և կենդանական աշխարհների ընդհանրացնող գաղափարն է [8]:

Հայաստանը լինելով երկրագործության և այգեգործության երկիր, զարդարվեստի մոտիվներում օգտագործել է խաղողը, նուռը և այլն, որոնք նույնպես պաշտամունքի առարկա են համարվել: Քննելով վարսանդապտղային զարդարվեստի մոտիվները, գալիս ենք այն եզրակացության, որ գաղափարածևերը ստեղծվել են որոշ պտուղների բնական ձվածև տեսքի հիման վրա, օրինակ անտառային կոները, վայրի պտուղների որոշ տեսակները, ողկույզները և այլն: Հարուստ վկայությունները հաստատում են կոների, վայրի պտուղների պաշտամունքը մեր նախնիների մոտ: Հիշենք նաև այն հանգամանքը, որ բազմաթիվ անտառային ծառեր նույնպես պաշտամունքի առարկա են եղել հենց իրենց պտուղների շնորհիվ [3]:

Մարդը նախ ճանաչել է հատիկը, հիմք դրել երկրագործությանը, ձեռք բերել կենսափորձ և, չկարողանալով բացատրել աճման ու զարգացման օրինաչափությունները, հանգել է դիցաբանական և կրոնական եզրահանգումների ստեղծելով պաշտամունքի առարկաներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Առաքելյան Ա.Գ.* Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, 3, Երևան, 1975:
2. *Բդոյան Վ.* Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ, Աշխատություններ Հայաստանի պետական թանգարանի, Երևան, 1950:
3. *Նազարյան Հ.* Նախապաշարմունք, 1, Տփղիս, 1878:
4. *Սարգսյան Գ.* Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը, 1937:
5. *Մանվելյան Խ.* Հին Հայաստանի կուլտուրան, Երևան, 1931:
6. *Арутюнян Н.В.* Земледелие и скотоводство Урарту. Ереван, 1964:
7. *Ковалевский М.* Закон и обычай на Кавказе. М., 1890.
8. *Пиотровский Б.Б.* История и культура Урарту. Ереван, 1944.
9. *Пиотровский Б.Б.* История Урарту. Л., 1962.

Ստացվել է 11.IV.1999